ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5480-Ա « 09 » նոյեմբերի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
09.11. 2026թ.
հ. 5480-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Իվան Զաքյան	Նոր Խարբերդի այգետարածք, 97-րդ տեղամաս, հ.20	հողամաս	Անշարժ գույքի նվիրատվության 21.10.2026թ. հ.3285 պայմանագրով, Իվան Զաքյանին նվիրած Նոր Խարբերդի այգետարածքի 97-րդ տեղամասի հ.20 հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 11-րդ փողոց, հ.14	011135N3DEMF	
2	Արամ Գալստյան /լիազորված անձ/ Գալուստ Գալստյան	Վ. Ենգիբարյան /Նորագավիթ 1-ին/ փողոց, հ.74	բնակելի տուն	Գալուստ Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Վ. Ենգիբարյան /Նորագավիթ 1-ին/ փողոցի հ.74 հասցեում գտնվող 15.5քմ մակերեսով բնակելի տանը /վկ. հ.17062024-01-0267, սեփ. հող. 394.0քմ/ տրամադրել հասցե՝ Վ. Ենգիբարյան փողոց, հ.74/1	01113EZPRD6Z	
3	Հրանտ Գալստյան և Զարուհի Կիրակոսյան	Հ. Քաջազնունու փողոց, հ.9 շենք, հ.81	բնակարան	Հրանտ Գալստյանին և Զարուհի Կիրակոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Հ. Քաջազնունու փողոցի հ.9 շենքի հ.81 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.25092026-01-0284, ընդհ. բաժն. 1.3քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 39.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Հ. Քաջազնունու փողոց, հ.9 շենք, բն.81/1	01063LQABM7S	
4	Վահագն Նահապետյան /լիազորված անձ/ Ալեքսանդր Գոգյան	Վ. Ավանեսովի փողոց, հ.2 շենք, հ.21	բնակարան	Ալեքսանդր Գոգյանին սեփականության իրավունքով պատկանող, Վ. Ավանեսովի փողոցի հ.2 շենքի հ.21 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.01102026-01-0213, ընդհ. բաժն. 1.26քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 57.29քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վ. Ավանեսովի փողոց, հ.2 շենք, բն.21/1	010538TV5Z4H	

5	Հայկարամ Մխիթարյան	Նորքի այգիներ հ.199	բնակելի տուն	Անշարժ գույքի նվիրատվության 20.10.2026թ. հ.7023 պայմանագրով, Հայկարամ Մխիթարյանին նվիրած՝ Նորքի այգիներ հ.199 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Արմենակ Արմենակյան փողոց, հ.114/1	01093PZPNNSM	
6	Հարություն Խաչատրյան /լիազորված անձ/ Մարիամ Դավթյան /սեփականատեր	Շարուրի փողոց, հ.5ա շենք, հ.25	բնակարան	Մարիամ Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող, Շարուրի փողոցի հ.5ա շենքի հ.25 հասցեում գտնվող բնակարանի /վկ.հ. 23092024-01-0212, ընդհ. բաժն.1.2քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 14.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Շարուրի փողոց, հ.5ա շենք, բն.25/1	011133DZDPMQ	
7	Սամվել Պողոսյան /լիազորված անձ/ Ռուզաննա Բասմաջյան	Դավթաշեն, Ձոր-2 թաղամաս, հ.61 և հ.61/1	հողամաս	Ռուզաննա Բասմաջյանին սեփականության իրավունքով պատկանող, Դավթաշեն, Ձոր-2 թաղամասի հ.61 և հ.61/1 հասցեներում գտնվող շինությունների /վկ. հ.15092026-01-0418 և հ.14092026-01-0266/ զբաղեցրած հողամասերին ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Դավթաշեն «Ձոր-2» թաղամաս, հ.54	01043WQZGZTC	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**